







որից ոչ մի կերպ չէք ուզում կտրել ձեր հայեացքը: Հայ գեղագիտական մտքի պատմութեան տեսակէտից անչափ ուշագրաւ է այն փաստը, որ եթէ Յովհաննէս Ջուղայեցի, ինչպէս տեսանք վերը, տեսականօրէն դեռ ճիշտ չէր լուծում գրականութեան ու գեղանկարչութեան սահմանների հարցը, ապա նրա կրտսեր ժամանակակից Ղուկաս Վանանդեցի մի քանի տարի յետոյ հրատարակած իր Պատկերասէր պատկերաստեաց (Ամստերդամ, 1716) մեծարժէք աշխատութեան մէջ արդէն, ըստ էութեան, հասարակութեան նշան դնելով գրականութեան ու գեղանկարչութեան միջեւ՝ գտնում է, որ մարդն իր գիտելիքներն ստանում է գերազանցապէս պատկերներով, ուստի թէ գրականութիւնը եւ թէ գեղանկարչութիւնը մեզ գիտելիքներ են տալիս պատկերների միջոցով: Ընդ որում պատկեր ասելով Վանանդեցի հասկանում է այն

ամէնը, ինչ իրենից բաց ի մեզ գիտելիք է տալիս նաեւ մէկ այլ բանի մասին (տե՛ս էջ 2):

Հարկ է նշել, որ արուեստի ձեւերի, մասնաւորապէս գրականութեան ու գեղանկարչութեան սահմանների, դրանց դերի ու խնդիրների հետ կապուած հարցերն այդ նոյն ժամանակ կրքոտ վէճեր էին յարուցում նաեւ եւրոպական գեղագէտների շրջանում. հարցեր, որոնք իրենց գիտական-մատերիալիստական լուծումն ստացան միայն Վանանդեցու գրքից ուղիղ կէս դար յետոյ՝ 1766 թ. Լեսինգի «Լատկոն» գեղագիտական դարակազմիկ աշխատութեան մէջ:

Յովհաննէս (Մրքուզ) Ջուղայեցու գեղագիտական մի շարք արժէքաւոր գաղափարները յիրաւի, պէտք է դառնան մասնագիտական լուրջ ուսումնասիրութեան առարկայ:

ՀՐ. ՄԻՐՁՈՅԵԱՆ

Փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր

## ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔՆՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Հ. ԱՐՍԵՆԻ ԱՅՏԸՆԵԱՆ (Նորայր Ն. Բիւզանդացու անտիպներից)

Ծանօթութիւն.— Յայտնի է Հ. Արսէն Այտընեանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, հանդերձ ներածութեամբ եւ յաւելուածով» աշխատութիւնը, Վիեննա, 1866, որի «Նախաշաւիղ»-ն է էջ 25-334: Սրա ենթավերնագիրն է՝ «Արդի հայերէն լեզուի ծագումն, էութիւնը, պատմութիւնն ու ներկայ վիճակը»: Հիմնական դրոյթներից մէկն այն է, թէ արդէն հինգերորդ դարում գոյութիւն ունէր «ուսմկորէնը» կամ «աշխարհաբարը», որի բառապաշարի եւ քերականութեան հետքեր յայտնաբերւում են, ըստ Հ. Ա. Այտընեանի, հինգերորդ եւ յետագայ դարերի որոշ մատենագիրների երկերի ձեռագրերում: Ահա այս դրոյթին եւ ի նպաստ բերուած մատենագրական փաստերին հակադրուել է Նորայր Ն. Բիւզանդացին իր վերոնշեալ աշխատութեան մէջ, որ նրա դիւանում անաւարտ է մնացել տետրերում, սկզբի մի քանի էջերի մաքրագրութեամբ (տե՛ս դիւանի մեր ցանկը «Բազմավէպ», 1983, 1-4, էջ 76, համար 327 եւ 335, դիւանում Թղթ. 8:0, 6:1-23, Վաւ. 6:3 եւ 6:18): Սեւագրութեան խորագրում կարդում ենք՝ «Ի քննական քերականութիւն», տակը՝ «Քննական քերականութեան», «Տեսութիւն գիշնական քերականութեան է. Արսենի Այտընեան», 28 յուլիս թեան է. Արսենի Այտընեան», 19 հոկտ. 1887 թուականով: 19 հոկտ. 1887 թուականով մաքրագրուած է 8 էջ վերոդրեալ վերնագրով, վերջին էջում 7 տող միայն, որոնց վերջին բառերն են «(տպ. Ս. Ղազարու, 1877)» Եւսեբիոսի Կեսարացու «Նկեղեցական Պատմութիւն» տպագրի: Սեւագրութիւնից պահպանուած են միայն 145 էջ. ուստի ամբողջական գործը չունենք. մենք համոզուած

ենք, որ Նորայրը գրել էր ամբողջը, որից յետոյ սկսել է մաքրագրել, սակայն մաքրագրութիւնը ութերորդ էջից չի շարունակուել: Հրատարակում ենք այն, ինչ պահպանուել է նրա դիւանում:

Բնական է, էական կամ ուղղագրական ոչ մի փոփոխութիւն չենք կատարել: Արդիականացրել ենք միայն արտաքինը՝ ընդգծումներ, կէտադրական աննշան բարելաւումներ, որպէս բառարանային միւտոր համարուած եւ գլխագիր սկզբնատառով գրուած հասարակ գոյականների, ածականների եւ կամ այլ բառերի մեծատառի փոխարինում փոքրատառով, [ ]-ների մէջ դրուած աննշան յաւելումներ մեր կողմից յատակութեան համար: Նկատեցինք, որ «Նախաշաւիղ»-ից մէջբերումներ կատարելիս Նորայրը երբեմն հեղինակի բառերով նախադասութիւններ է կազմել փոխանակ երկար մէջբերումների, շատ քիչ անգամ էլ իր կողմից մի բառ աւելացնելով, որ մենք ( )-ի մէջ դրեցինք: Նկատեցինք նաեւ, որ «Նախաշաւիղ»-ում բնագրային մէջբերումների տեղերն ստոյգ նշուած չեն. սրանք Նորայրն է լրացրել, սակայն առանց նկատել տալու, երբեմն էլ տեղերը դատարկ է թողել յետագայում ամբողջացնելու համար, որը գուցէ արել էր մաքրագրութեան մէջ: Նորայրն այս աշխատանքը գրել է տետրերում, համարակալելով իր գրած ձախ էջը, իսկ հանդիպակաց էջում ունի բազմաթիւ լրացումներ, առանց ներմուծուելու տեղերի նշման. ներմուծումները մերն են. հեղինակը հաւանաբար դրանք աւելի լաւ պիտի շարկապէր:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ  
ԺճԵԼԻ ԽԱՄԱՍԱՐԱՆ